Արձանագրություն N 4

ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28 օգոստոսի 2018թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բալայանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Սարգսյանը, Է. Մխիթարյանը և Հ. Սիրունյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին

ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով ընթացակարգի 1-2 չափաբաժինների համար (գնահատող հանձնաժողովի 22.08.2018թ. N 3 արձանագրությամբ) «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի ներկայացված որակավորման չափանիշները լիարժեք գնահատելու համար, ընկերությանը առաջարկված մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

2. Ուսումնասիրության արդյունքները

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա>> ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան տեղեկատվության՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ գնահատող հանձնաժողովի 22.08.2018թ. N 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում ընկերությունը չի շտկել:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանձնաժողովը որոշեց՝
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով ընթացակարգի.

1. առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել՝ ներկայացված որակավորման չափանիշները հիմավորող փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելու և հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով առկա օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունների հիմքերով:

2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել **1-ին** չափաբաժնի մասով «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին, **2-րդ** չափաբաժնի մասով «ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՋԱՆԻԿԻ» Ա/Ձ-ին:

3. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ **1-ին** չափաբաժնի մասով «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին և **2-րդ** չափաբաժնի մասով «ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՋԱՆԻԿԻ» Ա/Ձ-ին առաջարկել՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (Հավելվածներ 5, 5.1 և 5.2):

4. Հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին և 2-րդ չափաբաժիններում 1-ին տեղեր զբաղեցրած «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի և «ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՋԱՆԻԿԻ» Ա/Ձ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____Ա. Բալայան

Անդամներ _____Վ. Սարգսյան

_____Է. Մխիթարյան

_____Հ. Սիրունյան

Քարտուղար _____Ա. Սարգսյան